ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

<<ԱԽՈՒՐԻԿԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ>>
ՊՈԱԿ-ի

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

2016-2021ԹԹ

<< ԱԽՈՒՐԻԿԻ ԲԱ >> ՊՈԱԿ-ի 2016-2021թթ. զարգացման ծրագիր

Շիրակի մարզի << Ախուրիկի ԲԱ>> ՊՈԱԿ -ը գործում է Ախուրիկ գյուղում, ունի անժամկետ լիցենզիա / տրված՝ 25. 12. 2006թ/ :
Ամբուլատորիան իրականացնում է բնակչության <<Առողջության Առաջնային Պահպանման>> ծրագիր:
Բժշկական օգնության և սպասարկման տեսակներն են՝

1. ընտանեկան բժշկություն / մեծահասակ և մանկական /
2. իմունոկանխարգելիչ
3. ֆունկցիոնալ ախտորոշիչ, էլեկտրասրտագրություն
4. նեղ մասնագիտացված դիսպանսեր հսկողություն /հակատուբերկուլյոզային, ինֆեկցիոն,էնդոկրին/
5. դեռահասների հսկողություն
6. հղիների վաղ հայտնաբերում, նախածննդյան, հետծննդյան հսկողության իրականացում:

Ամբուլատորիան ունի մոտ 8300 բնակչություն, իր 7 ստորաբաժանումներով՝
Ոսկեհասկ, Հայկավան, Առափի, Երազգավորս, Ղարիբջանյան, Գետք, Բայանդուր:
Ամբուլատորիա ունի 22 աշխատող, այդ թվում՝
ընտանեկան բժիշկ - 2
թերապևտ - 1
բուժ քույրեր – 14, որից 12-ը՝ ԲՄԿ- ում:
Ամբուլատորիան տեղակայված է մի հարկանի քարե շենքում, որը իր մակերեսով՝124քմ^2 և սենյակների քանակով չի համապատասխանում պահանջվող նորմերին, խիստ խոնավ է, չունի բավարար սենյակներ բժշկների և բուժ սպասարկման իրականացման համար:
Վերանորոգվել է 1998թ.-ն << Ամքոր>> կազմակերպության կողմից,ներկայումս խիստ կարիք ունի վերանորոգման : Խիստ խոնավության պատճառով հաճախակի շարքից դուրս են գալիս ԷՍԳ – ի ապարատը և գյուկոմետրերը : Համայնքը գազաֆիկացված չէ, որի պատճառով ջեռուցումը իրականացվում է էլեկրա էներգիայով, որը խիստ ծախսատար է :
Ամբուլատորիայում կատարվում է ԷՍԳ, գլյուկոզայի հետազոտություն,մյուս հետազոտությունները պայմանագրային հիմունքներով իրականցվում է << Ախուրյանի ԲԿ>>-ում:
ՈՒնենք պայմանագրեր << Ախուրյանի ՄՄԱԿ>>-ի, Գյումրու ծննդատան հետ:
Ամբուլատորիան աշխատում է պետ պատվերով , վճարովի ծառայություններ չի իրականացնում:

Անհրաժեշտ է շենքը հիմնովին վերանորոգել, /դրենավորել՝ խոնավությունը վերացնելու նպատակով, սենյակների քանակը ավելացնել, սալիկապատել, քանի որ չկա գազաֆիկացում, ցանկալի է ջեռուցումը ապահովելու համար տեղադրել ջերմատաքացուցիչներ<<արևային մարտկոցներ>>,որը քիչ ծախսատար է, քան էլեկտրոէներգիայով ջեռուցելը:

Քանի որ ամբուլատորիան սպասարկում է 8 համայնքների, բժշկական օգնություն և սպասարկումը , տնային այցերը, մանկահասակ երեխաների պատվաստումները /պատվաստանյութերը տեղափոխելու համար/ պատշաճ ժամանակին կատարելու համար անհրաժեշտ է ավտոմեքենա:

Բուժանձնակազմը կարիք ունի մասնագիտական վերապատրաստման:

Ամբուլատորիայի խոնավության պատճառով ԷՍԳ ապարատը բազմիցս ենթարկվել է վերանորոգման, քանզի ամբուլատորիային պետք է ԷՍԳ ապարատ, գլյուկոմետրեր, կիսաավտոմատ բիոքիմիական անալիզատոր/արյան մեջ խոլեստերին որոշելու համար/,սկրինինգային ծառայությունը պատշաճ կերպով կատարելու համար, ելնելով ազգաբնակչության սոցիալ տնտեսական վիճակից,քանի որ բնակիչները դժվարանում են հասնել <<Ախուրյանի ԲԿ>> տվյալ անալիզը հանձնելու համար:

Ամբուլատորիայի տնօրեն Գ.Կարապետյան